ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 846-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

____ ____ 2026 թվականի N ___ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 846-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 6-ի «Կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարում անկած, ոչնչացված կամ սանիտարական սպանդի (հարկադիր մորթի) ենթարկված կենդանիների փոխհատուցման կարգը և կենդանիների ոչնչացման կամ հարկադիր մորթի իրականացման պայմանները, դեպքերը և կարգը սահմանելու մասին» N 846-Ն որոշման (այսուհետ՝

Որոշում) մեջ **կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.**

1) Որոշման N 1 հավելվածի 6-րդ կետը լրացնել նոր 1.1-ին ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝

«1.1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալը.».

2) Որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի 1-ին ենթակետի բ. պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ.սույն Որոշման N 1 հավելվածի 21-րդ կետով սահմանված հիվանդություններից անկած, ոչնչացված կամ սանիտարական սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը՝ ըստ նույնականացման համարի (խոշոր և մանր եղջերավոր կենդանիների դեպքում), կենդանատեսակի, սեռահասակային խմբի, քաշի,».

3) Որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի 1-ին ենթակետի «դ.» պարբերությունում «դեպքում» բառը փոխարինել «ընթացքում» բառով.

4) **Որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի 4-րդ ենթակետից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.**

5) Որոշման N 1 հավելվածի 13-րդ կետը լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝

«5) կենդանիների հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածման գոտիների ճշգրտումը։».

6) Որոշման N 1 հավելվածի 20-րդ կետում «55» թիվը փոխարինել «45» թվով և «չափով» բառից հետո լրացնել «(առավելագույնը 500 գլխի համար)։» բառերը.

7**)** Որոշման **N 1 հավելվածը լրացնել նոր՝ 21.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝**

«21.1. Կենդանու սեփականատիրոջ կողմից Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի Կոլեգիայի 2018 թվականի փետրվարի 13-ի թիվ 27 որոշմամբ սահմանված անասնաբուժասանիտարական պահանջները չպահպանելու դեպքում՝ փոխհատուցումը մերժվում է։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 120-րդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ